

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

27.04.2020

Նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում, երբ աշխարհն արտառոց իրավիճակում էր հայտնվել, երկրում հայտարարվել էր արտակարգ դրություն, բուհերը ստիպված էին առցանց սկզբունքով ուսուցում իրականացնել՝ ապահովելով ուսանողների կրթության անընդհատությունը:

Ստեղծված իրավիճակը, որը նաև մարտահրավեր էր բուհերի համար, ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման հսկայական փորձի ձեռք բերման հնարավորություններ ընձեռեց:

ԱԲՀ-ում ապրիլի 16-ից մեկնարկեց առցանց ուսուցումը և իրականացվող հեռավար ուսուցման արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաև ուսուցման գործընթացի խնդիրներն ու թերությունները պարզելու, շտկելու, լուծումներ գտնելու նպատակով սույն թվականի ապրիլի 22-25-ը Համալսարանի ուսանողների շրջանում անցկացվեցին առցանց հարցումներ:

1. Հետազոտության նպատակները՝

- ❖ Աջակցել ուսանողներին հեռավար ուսուցման պայմաններում և նրանց հետ հաստատել կայուն հետադարձ կապ:
- ❖ Դասախոսներին հնարավորություն տալ ուսանողների աչքերով տեսնելու հեռավար դասավանդման իրենց կատարած աշխատանքը, առցանց ուսուցման հնարավորություններն ու թերությունները:
- ❖ Հարցումների արդյունքների հիման վրա բացահայտել հեռավար դասընթացների անցկացման որակը:

2. Հետազոտության խնդիրները՝

- ❖ Բացահայտել հեռավար դասավանդման գործընթացում առկա խնդիրներն ու բացերը, շահագրգիռ ստորաբաժանումներին ներկայացնել թերությունների շտկման և բարելավման առաջարկություններ:
- ❖ Ստեղծել տվյալների հենք պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման համար:
- ❖ Ձեռք բերված տեղեկատվության հիման վրա համեմատական վերլուծության եղանակով վերհանել հեռավար և ավանդական/լսարանային դասավանդման գործընթացների առանձնահատկությունները:

3. Ուսանողների հարցման գործընթացի կազմակերպումը

ԱԲՀ-ն 2019-20 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացրել է հեռավար դասընթացների արդյունավետության վերաբերյալ ուսանողական անանուն առցանց հարցումներ՝ Համալսարանի երկու ֆակուլտետների ուսանողների շրջանում: 314 ուսանողներից 248-ը /231+17/, այսինքն ուսանողների ընդհանուր թվի 80%-ը մասնակցել են հարցմանը և պատասխանել հարցաթերթիկում ներառված հարցերին (Հավելված 1):


Հարցաթերթը պարունակում է 16 հարց, որոնց մեջ առկա են փակ, բաց հարցեր և 2 տեղեկատվություն պարունակող հարց՝ ֆակուլտետի/ամբիոնի և կուրսի վերաբերյալ:

4. Հետազոտության ընտրանքի նկարագրություն


Ուսանողների առցանց հարցումներն անցկացվել են Google Forms ծրագրով՝ երկու ֆակուլտետների ուսանողների շրջանում: Ուսանողների ակտիվ մասնակցությունն ապահովվել է Ուսումնական մասի և Արտաքին կապերի բաժնի շնորհիվ՝ տարածելով հղումը նրանց ֆեյսբուքյան էջում, հորդորելով ուսանողներին պատասխանել անաչառ և օբյեկտիվ: Նույն հարցաշարը կազմվել է անգլերեն և հայերեն տարբերակներով նախատեսված հայ և օտարերկրյա ուսանողների համար:

5. Հարցման արդյունքների ամփոփում


Հարցումների արդյունքներն ամփոփվել են Որակի ապահովման առաջատար մասնագետի կողմից, ներկայացվել պրոռեկտորին և համապատասխան ստորաբաժանումներին (ամբիոն, ֆակուլտետ), ապա նաև զեկուցվել Համալսարանի Գիտական խորհրդի նիստին:



Մասնակցությունն ըստ կուրսերի




1. Մասնակցում եք արդյոք հեռավար դասընթացներին:



Ինչպես երևում է գծապատկերից, հարցման մասնակիցների 85%-ը մասնակցում է առցանց դասերին, 6%-ը մասնակցում է ավելի շատ, քան լսարանային դասերին, 5 %-ը՝ ավելի քիչ, քան լսարանային դասերին, իսկ 4%-ը ընդհանրապես չի մասնակցում:


2. Հեռավար (ONLINE) ուսուցման ձեր բեռնվածությունը:



Այս հարցին պատասխանողների 45%-ը գտնում է, որ չի փոխվել ուսուցման ծանրաբեռնվածությունը, այն մնացել է նույնը, 37 %-ը գտնում է, որ ծանրաբեռնված են ավելի, քան լսարանային դասերի ժամանակ, իսկ 18%-ը գտնում է, որ թերևս է ծանրաբեռնվածությունը:


3. Առցանց ի՞նչ հարթակ կամ հավելված եք օգտագործում հեռավար դասին մասնակցելու համար /ընտրել տարբերակներ/:

Տվյալները գծապատկերում արտահայտված են տոկոսներով



4.Որո՞նք են ըստ ձեզ հեռավար ուսուցման դրական կողմերը կամ առավելությունները /Կարող եք նշել պատասխանի մի քանի տարբերակ/


Տվյալները գծապատկերում արտահայտված են տոկոսներով



Ուսանողների կողմից նշվել են առցանց ուսուցման մի շարք դրական կողմեր, սակայն երկու ֆակուլտետներում էլ կան ուսանողներ, ովքեր գտնում են, որ հեռավար դասընթացներում առհասարակ դրական կողմեր չկան:


Հարցված ուսանողների 65.8%-ը հեռավար ուսուցման առավելություններից նշել է կարող եմ մասնակցել ցանկացած վայրից տարբերակը, այնուհետև կարող եմ մասնակցել, երբ անգամ հիվանդ եմ՝ 62.8%-ը, ինչպես նաև կարող եմ դասերը ձայնագրել տարբերակը ընտրել է մասնակիցների 61%-ը: Ինքնուսուցման հնարավորությունները, այսինքն՝ ուսանողի ինքնուրույն աշխատանքի դերը կարևորել է հարցված ուսանողների 15.6%-ը: 6.5 %-ին ոչինչ դուր չի գալիս առկա ուսուցմամբ սովորելիս:

5. Որո՞նք են ըստ ձեզ հեռավար ուսուցման խոչընդոտները կամ թերությունները /Կարող եք նշել պատասխանի մի քանի տարբերակ/
Տվյալները գծապատկերում արտահայտված են տոկոսներով




Հարցման արդյունքից պարզ դարձավ, որ ուսանողների 10%-ի գիտելիքներն ու հմտությունները բավարար չեն տեխնիկական միջոցներից օգտվելու համար, 13.4%-ը անհատական համակարգչի խնդիր ունի: Մեծ էր թիվը այն ուսանողների/64.1%/, ովքեր նշել էին, որ կան դժվարություններ էլեկտրոնային ռեսուրսների, համացանցի հետ կապված: Հարցմանը մասնակցած ուսանողների 48,9%-ը հեռավար ուսուցման թերություններից է համարում էկրանի մոտ չափազանց շատ ժամանակ անցկացնելը: Միայն հարցմանը մասնակցած ուսանողների 28,6 %-ը թերություն չի տեսնում:

6. Ուսումնառության և դասավանդման ի՞նչ մեթոդներ են կիրառվում հեռավար դասերին



Հեռավար դասընթացներին կիրառված մեթոդների նշված տարբերակներից բոլորն էլ ընտրել են հարցման մասնակիցները, իհարկե տարբեր տոկոսային հարաբերությամբ, ինչը շատ ոգևորիչ է:


7. Հնարավոր է արդյոք ուսումնական նյութի մատչելի ընկալումը հեռավար ուսումնական գործընթացի պայմաններում:



Հեռավար ուսումնական գործընթացի պայմաններում ուսումնական նյութի ընկալումը մատչելի է համարում հարցմանը մասնակցած ուսանողների 42 %-ը, մասամբ մատչելի 40%-ը,


6%-ի կարծիքով այդքան էլ մատչելի չէ, իսկ 12%-ը գտնում է, որ այն մատչելի չէ ընդհանրապես:

8. Արդյո՞ք հեռավար ուսուցումը հնարավորություն է տալիս Ձեզ լիարժեք ներգրավվել ուսումնական դասընթացին:




Ինչպես երևում է հարցման արդյունքից, հարցմանը մասնակցած ուսանողների 30% -ն ունի հեռավար դասընթացներին լիարժեք ներգրավվելու հնարավորություն, 25%-ը նույնպես գտնում է, որ կարող է լիարժեք ներգրավվել հեռավար դասընթացներին, եթե տեխնիկական խնդիրներ չլինեն, ինչը չի բացառվում: Հարցվածների 16%-ը փաստում է, որ հեռավար ուսուցումը դասին լիարժեք ներգրավվելու հնարավորություն չի տալիս:

9. Հեռավար ուսուցման ընթացքում ուսումնական նյութերը ի՞նչ ձևաչափով են Ձեզ տրամադրվում /Կարող եք նշել պատասխանի մի քանի տարբերակ/
Տվյալները գծապատկերում արտահայտված են տոկոսներով




Շատ կարևոր էր նաև պարզել ուսումնական նյութերի տրամադրման եղանակները և, ինչպես երևում է ուսանողների պատասխաններից, դասախոսները կիրառում են ամենատարբեր ձևաչափեր՝ հնարավորինս ապահովելու հեռավար ուսուցման պայմաններում ուսանողների կրթությունը:

10. Ինչպիսի՞ առաջադրանքներ ու հանձնարարականներ են տրվում գործնական դասերին
Տվյալները գծապատկերում արտահայտված են տոկոսներով




Հարցմանը մասնակցած ուսանողների **96.5%-ը** գործնական առաջադրանքների մի քանի տարբերակներից **պրեզենտացիաներն** է նշել, փոքր չէ նաև **էսսեի և թեստի** տարբերակը նշած ուսանողների թիվը՝ համապատասխանաբար **54.1%** և **56.3%**: Ունենք նաև պատասխանի **Այլ** տարբերակն ընտրած ուսանողներ, ինչը վկայում է, որ հեռավար դասընթացներին ևս կիրառվել են ուսումնառության տարբեր մեթոդներ՝ միտված կրթական վերջնարդյունքների ապահովմանը:

11. Ինչպե՞ս է ապահովվում հետադարձ կապը առաջադրանքների գնահատման համար:
Տվյալները գծապատկերում արտահայտված են տոկոսներով



Ինչպես երևում է գծապատկերից, ուսանողների կատարած աշխատանքների գնահատման համար հետադարձ կապն ապահովվում է և՛ անհատական մոտեցմամբ, և՛ նրանց կողմից օգտագործվող առցանց հարթակի օգնությամբ: Հարցված ուսանողների 11,3 տոկոսը համարում է հետադարձ կապը թույլ, իսկ 0.4 %-ի համար այն չի ապահովվում:


12. Կցանկանայիք, որ 2019-2020 ուս. տարվա II կիսամյակի ստուգարքներն ու քննություններն անցկացվեն օնլայն:



Հարցվածների մեծամասնությունը՝ 64%-ը, ցանկանում է, որ այս կիսամյակի ստուգարքներն ու քննություններն անցկացվեն օնլայն, 13%-ը չի ցանկանում հեռավար քննություններ հանձնել:


13. Գնահատեք 10 բալային համակարգով հեռավար ուսումնական գործընթացի արդյունավետությունը.

Հումանիտար դասընթացներ /դասախոսություն և գործնական/




14. Գնահատեք 10 բալային համակարգով հեռավար ուսումնական գործընթացի արդյունավետությունը.

Բնագիտական դասընթացներ /դասախոսություն և գործնական/




15. Գնահատեք 10 բալային համակարգով հեռավար ուսումնական գործընթացի արդյունավետությունը.

Բժշկական սարանական դասընթացներ /դասախոսություն և գործնական/



16. Գնահատեք 10 բալային համակարգով հեռավար ուսումնական գործընթացի արդյունավետությունը.

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ /դասախոսություն և գործնական/



Ուսանողներին առաջարկվել է 10 բալային համակարգով գնահատել հեռավար ուսուցման գործընթացի արդյունավետությունը՝ ըստ ամբիոնների կողմից դասավանդվող առարկաների: Չնայած նրան, որ բուհերը այդքան էլ պատրաստ չէին հեռավար ուսուցման, ճիշտ է որպես լրացում լսարանային դասավանդման, այս կամ այն չափով կիրառվել են էլեկտրոնային ուսուցման տարատեսակ գործիքներ, սակայն հեռավար ուսուցումը մարտահրավեր էր բուհերին: Այնուամենայնիվ ԱԲՀ-ի ուսանողների գնահատականներից կարելի է դատել, որ ընդհանուր առմամբ նրանք գոհ են հեռավար ուսուցումից, քանի որ բարձր են գնահատել առցանց դասերի արդյունավետությունը: Հեռավար ուսումնական գործընթացի արդյունավետությունը ավելի օբյեկտիվ գնահատելու համար անհրաժեշտ է նաև իրականացնել հասցեական հարցումներ՝ պարզելու յուրաքանչյուր դասընթացի դասավանդման որակը: Դասընթացի արդյունավետության գնահատականը ակնկալում ենք ստանալ նաև քննաշրջանի արդյունքներն ամփոփելիս:

17.Խնդրում ենք նշել Ձեր առաջարկությունները, որոնք հեռավար ուսուցումն կդարձնեն ավելի արդյունավետ

82 ուսանող- Չունեն առաջարկներ, կարոտում են համալսարանը:

32 ուսանող- Դասացուցակը տրամադրեն նախօրոք, ոչ թե երեկոյան, լինի ֆիքսված, չլինեն դասեր շաբաթ և կիրակի օրերին:

21 ուսանող- Երբեմն կապի հետ խնդիրներ են առաջանում և բանավոր հարցման դեպքում չեն կարողանում պատասխանել հարցերին: Կապի բացակայության պատճառով չեն կարող մասնակցել դասերին և ստանում են բացակա:

12 ուսանող- Կան առարկաներ, որոնք դժվար է ընկալել և կենտրոնանալ հեռավար ուսուցման ժամանակ: Ինչպես նաև դժվար է ստանալ դրական գնահատական:

12 ուսանող- Առաջարկում են քննությունները չանցկացնել առցանց: Նախընտրելի է, որ քննությունները տեղափոխվեն սեպտեմբերին: Բացի այդ ուսանողների համար հեշտ կլինի արտագրելը առցանց քննության ընթացքում:

8 ուսանող- Կարծում են, որ այս իրավիճակում առցանց ուսուցումը լավագույն տարբերակն է, և բոլոր դասախոսները անում են հնարավորինս ամեն ինչ արդյունավետ անցկացնելու դասը: Ինչպես նաև խնայում են ժամանակը և համալսարան գալու ճանապարհածախսը: Կարող են մասնակցել դասերին, որտեղ էլ որ լինեն:

7 ուսանող- Բացի դասախոսություններից լինեն նաև գործնական առաջադրանքներ: Բացակայում են գործնական առաջադրանքների կիրառումը:

7 ուսանող- Դասերը պետք է անցկացվեն ավելի ինտերակտիվ և հետաքրքիր, որպեսզի չձանձրանան:

6 ուսանող- Առաջարկում են առցանց դասերը սկսել 10:45 կամ 11:00, քանի որ ոմանք գտնվում են իրենց երկրում, և ժամային գոտին տարբեր է:

6 ուսանող- Դասը տևի այնքան, որքան տևում էր համալսարանում: Կան դասախոսներ, ովքեր առցանց ուսուցումը անցկացնում են երկար:

6 ուսանող- Դասերի և դասախոսությունների միջև լինեն ընդմիջումներ::

5 ուսանող- Առաջարկում են, որ բոլոր ուսանողները միացրած պահեն իրենց տեսախցիկները՝ ապահովելու համար իրենց ներկայությունը:

5 ուսանող- Կարծում են, որ դասախոսները պետք է լինեն ավելի լուրջ և պատրաստված հեռավար ուսուցման ժամանակ:

4 ուսանող- Կարծում են, որ այս իրավիճակում դժվար է կենտրոնանալը, հետևաբար առաջարկում են քննություններն անցկացնել հեշտ եղանակով և լինեն թեստային, այլ ոչ թե բանավոր:

3 ուսանող- Տրամադրեն տեսահոլովակներ և նյութեր, ինչը էլ ավելի կօգնի ամրապնդել իրենց գիտելիքները, և դասախոսությունները կլինեն ավելի արդյունավետ:

3 ուսանող- Առաջարկում են անցկացնել քննությունները հեռավար:

3 ուսանող- Առաջարկում են դադարեցնել առցանց ուսուցումը, քանի որ դժվար է անընդհատ կլանված նստել էկրանի դիմաց:

2 ուսանող-Կարծում են, որ համալսարանում դասերը ավելի լավ էին անցնում:

2 ուսանող- Անցկացնել ներկա- բացակա:

2 ուսանող- Դասախոսները տալիս են շատ առաջադրանքներ՝ պատճառաբանելով, որ ուսանողները տանը ավելի շատ ժամանակ ունեն:

1 ուսանող- Չանցկացնել ներկա- բացակա:

1 ուսանող- Առաջարկում է փոքր խմբերով անցկացնել դասերը:

1 ուսանող- Առաջարկում է Zoom-ի փոխարեն օգտագործել մեկ այլ հարթակ առցանց ուսուցման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով առցանց ուսուցման արդյունավետության վերաբերյալ ուսանողների առցանց հարցման արդյունքները՝ նշենք, որ չնայած փակ հարցման արդյունքները հիմնականում դրական վերաբերմունք էին արտահայտում առցանց ուսուցման կազմակերպման, իրականացման վերաբերյալ, սակայն բաց հարցերի պատասխանները դրական կողմերին զուգահեռ հնարավորություն տվեցին բացահայտել նաև մի շարք խորքային խնդիրներ, որոնք հիմնականում հստակ ձևակերպված են ուսանողների կողմից: Անդրադառնանք վերլուծության ընթացքում վեր հանված խնդիրներին՝

1. Տեխնիկական և կապի ապահովման խնդիրներ
2. Ուսանողների ոչ լիարժեք ներգրավվածություն դասընթացներին
3. Դասախոսների և ուսանողների ծանրաբեռնվածություն
4. Հեռավար ուսուցման մատչելիության ապահովում
5. Ճկուն դասացուցակի կազմում և նախօրոք տրամադրում ուսանողներին
6. Էլեկտրոնային ռեսուրսներից, տեխնիկական միջոցներից օգտվելու գիտելիքների և հմտությունների բավարար մակարդակի ապահովում ուսանողների շրջանում

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարցումը հնարավորություն է ընձեռել ուսանողներին ոչ միայն նշել առցանց ուսուցման դրական կողմերն ու առկա խնդիրները, այլ նաև հանդես գալ առաջարկներով առկա խնդիրների լուծման և առցանց ուսուցման բարելավման վերաբերյալ: Ստորև բերված առաջարկները ներառում են նաև ուսանողների տեսակետերը:

1. Ավելի հետաքրքիր դարձնել հեռավար ուսուցումը՝ կիրառելով SS տարբեր գործիքներ, որոնք նախատեսված են թեստերի ու տարբեր առաջադրանքների համար, ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը:
2. Ուսումնասիրել հեռավար ուսուցման գործընթացը և մշակել մեթոդաբանություն, ուղեցույցներ ուսանողների և դասախոսների համար:
3. Հաշվի առնել ուսանողների ծանրաբեռնվածությունը՝ նվազեցնել առաջադրանքները, կիրառել դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ մեթոդներ:
4. Անցկացնել ուսանողական առցանց հարցումներ՝ գնահատելու ԱԲՀ-ում 2019-20 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող դասընթացների որակը՝ հեռավար ուսուցման արդյունավետության մասին առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով:
5. Էլեկտրոնային հարթակի և համացանցի միջոցով ստեղծել նորարական կրթական միջավայր ուսանողների և դասախոսների համար, մշակել և կիրառել ինտերակտիվ դասընթացների չափորոշիչներ, վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:

Որակի ապահովման
առաջատար մասնագետ՝

Մ.Հովսեփյան